

2013թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ՝ «ԱՄՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2012» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

Տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ-ում /տեսության և պրակտիկայի հարցեր/

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2013թ. - 30.12.2013թ.

Թեմայի ղեկավարը

**Ավետիսյան Գայանե
ՀՊՏՀ ասպիրանտ**

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Ծրագիրն իրականացվել է ՀՀ տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում տնտեսական մրցակցության պետական պաշտպանության գործընթացում առկա հիմնախնդիրների բացահայտման, դրանց հաղթահարման և կատարելագործման գործնական ուղիների մշակման նպատակով՝ հիմնվելով միջազգային փորձի և ՀՀ առանձնահատկությունների համակողմանի վերլուծության վրա:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Ծրագրի նպատակի իրագործման անհրաժեշտությունից ելնելով՝ թեմայի շրջանակում ուսումնասիրվել են տնտեսական մրցակցության պետական կարգավորման տեսական և մեթոդական հիմքերը, տնտեսական մրցակցության պետական կարգավորման գործընթացում առկա հիմնախնդիրները,

մասնավորապես՝ հակամրցակցային համաձայնությունների (ներառյալ պետական գնումների գործընթացում), գերիշխող դիրքի չարաշահումների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների, համակենտրոնացումների բացահայտման խնդիրները: Վերլուծվել են ՀՀ մրցակցային դաշտը կարգավորող օրենսդրությունը, դրա կատարելագործման հնարավորություններն ու ուղիները, ինչպես նաև մրցակցային քաղաքականության արտասահմանյան փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում: Ծրագրի շրջանակում ներկայացվել են այն հիմնական միջոցառումները (տնտեսական, քաղաքա-կան, ինստիտուցիոնալ և այլն), որոնք կնպաստեն մրցակցության պաշտպանության քաղաքականության կատարելագործմանը և արդյունավետության բարձրացմանը:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Ուսումնասիրության արդյունքում, ՀՀ առանձնահատկություններից ելնելով, առաջարկվել է մրցակցության պաշտպանության հիմնախնդիրների լուծման առանձնահատուկ հակամենաշնորհային կարգավորման մոդել: